ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Ընդդեմ «Արմենիա» հեռուստաընկերության «Սուր անկյուն» հաղորդաշարի 12.07.2020 թողարկման՝ Հայկական հոգեբուժական ասոցիացիայի նախագահ Արմեն Սողոյանի դիմումի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել Հայկական հոգեբուժական ասոցիացիայի նախագահ Արմեն Սողոյանն՝ ընդդեմ «Արմենիա» հեռուստաընկերության «Սուր անկյուն» հաղորդաշարի 12.07.2020 թողարկման «Խելագարության հասցնելու տմարդի ձևերը» ռեպորտաժի (28-րդ րոպեից) (հեղինակ՝ Նելլի Հարությունյան):

Ըստ բողոքի հեղինակի՝ նյութը ներկայացվում է միակողմանիորեն, և այն վարկաբեկում է հոգեբուժական ծառայությունը:

Այսպիսով, դիմումատուն ԴՄ-ից ակնկալում է իրականացնել աշխատակարգով սահմանված գործողություններ:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. «Արմենիա» հեռուստաընկերության «Սուր անկյուն» հաղորդաշարի 12.07.2020 թողարկման ընթացքում հեռարձակել է «Խելագարության հասցնելու տմարդի ձևերը» ռեպորտաժը, որում լրագրողն անդրադարձել է «Ավան» հոգեկան առողջության կենտրոնին:

Նյութում մասնավորապես պատմվում է այն մասին, որ «առողջ մարդը հայտնվում է հոգեբուժարանում, իսկ հիվանդ մարդը մնում ազատության մեջ»: Որպես պատճառ նշվում է ոչ միայն օրենքի անկատարությունը, «այլև սուբյեկտիվ գործոնը»: «Ի մասնավորի,

ոստիկանությունը իրավասու է ահազանգի հիման վրա հոգեկան հիվանդությամբ տառապելու մեջ կասկածվող անձին հարկադրաբար հոգեբուժարան տեղափոխել: Վերջինին 72 ժամում պետք է հետազոտի համապատասխան հանձնաժողովը, որը սակայն, որպես կանոն, բաղկացած է լինում նույն հոգեբուժարանի բժիշկներից: Դատարանն էլ, հիմք ընդունելով այդ հանձնաժողովի որոշումը, շատ հաճախ, առանց մարդու ներկայության, նրան կարող է տարիներով փակել հոգեբուժարանում»: (…) «Բայց նույնիսկ երբ ստացվում է ապացուցել, որ մարդն առողջական խնդիր չունի, պարզվում է , որ նա գնալու տեղ չունի, որովհետև ասենք, եղբայրը վաճառել է խնդրո առարկա բնակարանը և հեռացել երկրից»: Այս նախաբանին հաջորդող տեսանյութում «Սուր անկյունը» ներկայացնում է, ինչպես և խոստանում էր, «նաև մեդալի հակառակ կողմը, երբ իրականում բուժման կարիք ունեցողին չմեկուսացնելու հետևանքով տեղի է ունեցել ողբերգություն»:

2. 2020թ. օգոստոսի 27-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն ստացել է Հայկական հոգեբուժական ասոցիացիայի նախագահ Արմեն Սողոյանի դիմումը, որում վերջինս գրում է, որ «նյութը ներկայացվում է միակողմանիորեն»:

Վերջինս կարծում է, որ դիտողի մոտ ստեղծվում է այն տպավորությունը, թե «ծառայությունը զբաղված է միայն անհիմն հոսպիտալիզացիայով և բուժման կարիք ունեցողներին չբուժելով», որ ռեպորտաժում հնչում են «ոչ ճիշտ գնահատականներ Կենտրոնի անգործունակության, եզրակացություններ տրամադրելու, խնամակալության հարցերի, ամենակոռումպացվածներից մեկը լինելու և այլնի վերաբերյալ»:

Այսպիսով Սողոյանը պնդում է, որ «հաղորդման արդյունքում վարկաբեկվում է հոգեբուժական ծառայությունը, մասնավորապես «Ավան» հոգեկան առողջության կենտրոնը»:

3. 2020թ. սեպտեմբերի 1-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը նամակով դիմեց «Արմենիա» հեռուստաընկերության «Սուր անկյուն» հաղորդաշարի ղեկավար Վահե Ղազարյանին՝ ստանալու վերջինիս պարզաբանումները հետևյալ հարցադրումների կապակցությամբ՝

- Արդյո՞ք լրագրողը/խմբագրությունը փորձել են խնդրի վերաբերյալ մեկնաբանություն ստանալ հոգեբուժական ծառայության ներկայացուցիչներից, մասնավորապես «Ավան» հոգեկան առողջության կենտրոնից:
- Ինչո՞ւ էր ռեպորտաժում բացակայում տուժողի հարազատների կողմից բողոք կամ դեպքի

նկարագրություն, և լուսաբանվող դեպքերը զուտ փաստաբանների գործերից դրվագներ էին։

- Ինչո՞վ է պայմանավորված, որ փաստաբան Մարատ Ատովմյանի մասնակցությամբ դրվագներում միշտ կադրում է իր ընկերության անվանումը (ոչ ենթագրով, ինչպես հաղորդման այլ մասնակիցների դեպքում)։

ԴՄ-ն 17 օրվա ընթացքում ևս մի քանի անգամ փորձեր ձեռնարկեց կապ հաստատելու Վ. Ղազարյանի հետ, սակայն դրանք նույնպես, ինչպես և նամակը, մնացին անարդյունք։

4. 2020թ. սեպտեմբերի 18-28-ը ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն անցկացրեց բողոքի առցանց քննարկումներ, որոնց ԴՄ անդամ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր Գնել Նալբանդյանը չմասնակցեց, համաձայն ԴՄ աշխատակարգի 3.5. կետի՝ ԴՄ-ում քննարկվող որևէ հարցի վերաբերյալ անձնական շահագրգռվածություն կամ շահերի բախում ունեցող ԴՄ անդամը պարտավոր է քննարկումից առաջ այդ մասին տեղեկացնել ԴՄ համակարգողին՝ հրաժարվելով տվյալ նիստին մասնակցելուց։

Բ. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր

1. Ճշգրտություն և անկողմնակալություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

1.1. մինչև հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել և չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ,

1.2. հստակորեն ու լսարանի համար հասկանալի մատնանշել այն դեպքերը, երբ խմբագրությունը, ստանալով հանրային նշանակության տեղեկություններ, օգտագործել է բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները, սակայն չի կարողացել ճշտել փաստերը,

1.3. հստակ սահմանազատել փաստերի և տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից,

1.4. վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս

հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա։

6. Ազնվություն հանրության հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

6.1. աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից,

6.2. պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, և պատասխանի հնարավորություն ընձեռելու բոլոր նրանց, ում հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում։

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

քննարկելով

ընդդեմ Արմենիա հեռուստաընկերության «Սուր անկյուն» հաղորդաշարի՝ Հայկական հոգեբուժական ասոցիացիայի նախագահ Արմեն Սողոյանի բողոքը,

նկատի ունենալով հանդերձ, որ

և՛ հաղորդումն ամբողջությամբ, և՛ բողոքի առարկա նյութն անդրադառնում էին հանրային կարևորություն ունեցող խնդիրների, և դրանց լուսաբանումը ենթադրում էր սուր մոտեցում հեղինակների կողմից,

հատուկ ընդգծելով, որ

լուսաբանման մեջ պահպանված է անձնական կյանքի գաղտնիության սկզբունքը, հերոսների անունները չեն նշվում, դեմքները փակված են, ինչպես նաև պահպանված է ընդհանուր պլանի կադրերում մարդկանց չնույնականացնելու սկզբունքը,

արձանագրում է.

1. 12.07.2020 թողարկման «Խելագարության հասցնելու տմարդի ձևերը» ռեպորտաժում «Արմենիա» հեռուստաընկերության «Սուր անկյուն» հաղորդաշարի լրագրողը և խմբագրությունը ջանք չեն

գործադրել լսելու հակառակ կարծիք՝ ներկայացնելով միայն հոգեբուժական ծառայությունների գործունեությունը բացասական բնութագրող տեսակետները (ըստ որում, ՄԻՊ-ի աշխատակցուհու կամ Ոստիկանության ներկայացուցչի խոսքերը բավարար աստիճանի չեն կարող դիտարկվել որպես այլ կարծիք),

2. փաստերի և տեղեկությունների շարադրանքը հստակ չէին սահմանազատել կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից. փաստաբանների հայտնածը հիմնականում ներկայացվում էր որպես փաստ, իսկ հաղորդումը վարողը և լրագրողն իրենց թույլ էին տալիս գնահատականներ, որոնց փաստական հիմքերը բավարար չափով չէին բերվում,

3. հաղորդումը վարողի և լրագրողի կողմից բազմաթիվ անգամներ գործածվող «հոգեբուժարան» տերմինն իր մեջ խտրական վերաբերմունք է պարունակում, քանի որ մասնագիտական համայնքը ներկայումս օգտագործում է հոգեկան առողջության կենտրոն արտահայտությունը՝ խուսափելու խարանից և վիրավորական բովանդակությունից: Նյութի հեղինակների «բուժման կարիք ունեցողները մնում են ազատության մեջ», «փակել հոգեբուժարանում», «հոգեկան հիվանդությամբ տառապել» արտահայտությունները վկայում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցողների նկատմամբ կաղապարային մոտեցման մասին,

4. փաստաբաններից մեկի մասնակցությամբ դրվագներում մշտապես երևացող ընկերության անվանումը (ոչ ենթագրով, ինչպես հաղորդման այլ մասնակիցների դեպքում) կարող է ընկալվել որպես քողարկված ջատագովում և անուղղակի ցուցիչ, որ նյութն ամենայն հավանականությամբ կառուցված է փաստաբանների շահերի վրա, ինչը պետք է բացառվեր նման հանրային կարևորություն ունեցող սուր թեմաների լուսաբանման դեպքում:

ՔԱՆԻ ՈՐ «Արմենիա» հեռուստաընկերությունը ինքնակարգավորման նախաձեռնության անդամ չէ և պարտավոր չէ հրապարակել սույն փորձագիտական կարծիքը, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը լրատվամիջոցին կոչ է անում իր գործունեության ընթացքում առաջնորդվել լրագրության էթիկական սկզբունքների պահպանությամբ:

Ընդունվել է 2020թ. սեպտեմբերի 28-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 47-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007թ. մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015թ. մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: